ZARE PRINT
design & printing house

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան,

Ձեզ եմ ուղարկում ՀՀ արտաքին հետախուզության ծառայության կողմից կազմակերպված ԱՀԾ-ՀՄԱԾՁԲ-25/02 ծածկագրով մեկ անձ գնման ընթացակարգի շրջանակներում «ԶԱՐԷ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված թիվ ԱՀԾ-ՀՄԱԾՁԲ-25/02 պայմանագրի բնօրինակները՝ երկու օրինակից:

Առդիր՝ 18 էջ:

«ԶԱՐԷ ՊՐԻՆՏ» ՍՊԸ տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ★ REPUBLIC OF ARMENIA YEREVAN LIMITED LIABILITY COMPANY ★
«ԶԱՐԷ ՊՐԻՆՏ»
«ZARE PRINT»
00465281

ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

13 հունիս 2025թ.

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ № 148/2025
«13» 06 2025 թ
1+18 թերթ

Address: Nor Aresh 48/31, Yerevan, RA Mobile: +374 77 45 46 47 E-mail: sales@zare.am / tnoren@zare.am

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՀԾ-ՀՄԱԾՁԲ-25/02

ք.Երևան

« 13 » հունիս 2025թ.

ՀՀ արտաքին հետախուզության ծառայությունը, ի դեմս **Հայկ Պետրոսյանի**, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Զարէ Պրինտ» ՄՊԸ**- ն, ի դեմս տնօրեն **Էդգար Խաչատրյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **2 /երկու/** օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 /հինգ/** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **990 500 (ինը հարյուր իննսուն հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 27-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	<< ԶԱՐԷ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարության տուն 1	ՀՀ ք. Երևան, Նոր Արեշ 48 փողոց, 31տուն
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	<< ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 900011045987	ՀՀ 24701 03314340000
ՀՎՀՀ 02900687	ՀՎՀՀ 00465281
ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ	ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ * СЛУЖБА ВНЕШНЕЙ РАЗВЕДКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ * FOREIGN INTELLIGENCE SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA * 02900687

«ԶԱՐԷ ՊՐԻՆՏ» ՍՊԸ «ZARE PRINT» LIMITED LIABILITY COMPANY * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * REPUBLIC OF ARMENIA * ԵՐԵՎԱՆ YEREVAN 00465281

Հավելված N 1
« 13 » հունիս 2025 թվականին կնքված
ԱՀԾ-ՀՄԱԾՁԲ-25/02 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79811100/3	Թղթապանակ՝ թուղթը դեկորատիվ 300-350գր, գույնը կապույտ (համաձայնեցնել պատվիրատուի հետ), չափերը 22.5սմ x 32սմ, մեջտեղից բացվող, դիմային էջի վերևի հատվածում արծաթագույն դաջվածք ՀՀ արտաքին հետախուզության ծառայության տարբերանշանով (չափ 6 սմ տրամագծով): Թղթապանակը պետք է լինի գրպանիկով, չափերը 19x7սմ, խորությունը 0.5սմ: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Քանակը 300 հատ:	դրամ	1	240 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
2	79811100/4	Նոթատետր՝ 50 թերթ, տողանի, չափերը 14սմ x 21սմ, թերթերը վերևից զսպանակով ամրացված, կազմը սպիտակ, դիմային էջի (կազմի) վերևի հատվածում տպագրված ՀՀ արտաքին հետախուզության ծառայության տարբերանշանը (չափ 5 սմ տրամագծով): Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Քանակը 100 հատ:	դրամ	1	120 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
3	79811100/5	Գրանցամատյան՝ թուղթ A4 չափի, 80 գր կավճապատ, գույնը սպիտակ: Տպագրությունը միագույն (սև): Տպագրվող թերթերի քանակը 100 հատ, համարակալումով: Բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Կազմը առանց տպագրության, հաստ, ամուր թղթից, կապույտ գույնի երեսպատումով, թելակար սոսնձվածքով, A4 թղթի չափերից 5մմ մեծ: Քանակը 10 հատ:	դրամ	1	120 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
4	79811100/6	Գրանցամատյան՝ թուղթ A4 չափի, 80 գր կավճապատ, գույնը սպիտակ: Տպագրությունը միագույն (սև): Տպագրվող թերթերի քանակը 50 հատ, համարակալումով: Բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Կազմը առանց տպագրության, հաստ, ամուր թղթից, կապույտ գույնի երեսպատումով, թելակար սոսնձվածքով, A4 թղթի չափերից 5մմ մեծ : Քանակը 10 հատ:	դրամ	1	70 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

5	79811100/7	Ձևաթղթի (բլանկ) տպագրություն՝ թուղթ 160գր, գույնը սպիտակ, Ա4 չափի, վերևում գունավոր տպագրված ՀՀ ԱՀԾ տարբերանշանը և հայերեն տեքստ (5-8 բառ), բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պատվիրատուին ներկայացնել նմուշային օրինակ, որից հետո կհաստատվի տպագրության: Քանակը 3000 հատ:	դրամ	1	135 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
6	79811100/8	Ձևաթղթի (բլանկ) տպագրություն՝ թուղթ 160գր, գույնը սպիտակ, Ա4 չափի, վերևում գունավոր տպագրված ՀՀ ԱՀԾ տարբերանշանը և անգլերեն տեքստ (10-12 բառ), բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:Պատվիրատուին ներկայացնել նմուշային օրինակ, որից հետոկհաստատվի տպագրության:Քանակը 300 հատ:	դրամ	1	13 500	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
7	79811100/9	Ձևաթղթի (բլանկ) տպագրություն՝ թուղթ 160գր, գույնը սպիտակ, Ա4 չափի, վերևում գունավոր տպագրված ՀՀ ԱՀԾ տարբերանշանը: Տեքստը՝ հայերեն և ռուսերեն (20-25 բառ), բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պատվիրատուին ներկայացնել նմուշային օրինակ, որից հետո կհաստատվի տպագրության: Քանակը 100 հատ:	դրամ	1	4 500	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
8	79811100/10	Ձևաթղթի(բլանկ) տպագրություն՝ թուղթ 160գր, գույնը սպիտակ, չափերը 9.8x12.5սմ, վերևում գունավոր տպագրված ՀՀ ԱՀԾ տարբերանշանը , տեքստը՝ հայերեն 6 բառ, ներքևի ձախ հատվածում հայերեն տպագրված 3 բառ: Բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պատվիրատուին ներկայացնել նմուշային օրինակ, որից հետո կհաստատվի տպագրության: Քանակը 1000 հատ:	դրամ	1	25 000	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
9	79811100/11	Այցեքարտի տպագրություն՝ թուղթը 350գր, երկկողմանի 4 + 4 տպագրություն, չափը 90 x 50մմ, դիզայնով: Տպագրությունը լինելու է տարբեր բովանդակությամբ: Բովանդակությունը կտրամադրի պատվիրատուն: Տպագրության դիզայնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պատվիրատուին ներկայացնել նմուշային օրինակ, որից հետո կհաստատվի տպագրության: Քանակը 500 հատ:	դրամ	1	17 500	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
10	79811100/12	Ա4 չափի թղթերի համար նախատեսված հատուկ ծրարներ (26.5 x 35 սմ)՝ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, կրաֆթ 150գր. թղթից ՝նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, վրան սև գույնով տպագրությամբ (բովանդակությունը կտրամադրվի պատվիրատուի կողմից): Քանակը 500 հատ:	դրամ	1	132 500	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում
11	79811100/13	Ա5 չափի թղթերի համար նախատեսված հատուկ ծրարներ (20 x 25.5 սմ)՝ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, կրաֆտ 150գր. թղթից ՝նախատեսված նամակների համար, սև գույն տպագրությամբ (բովանդակությունը կտրամադրվի պատվիրատուի կողմից): Քանակը 500 հատ:	դրամ	1	112 500	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Ք. Երևան, Կառավարության տուն 1
ՀՀ ՖՆ կենտրոնական
գանձապետարան
ՀՀ 900011045987
ՀՎՀՀ 02900687

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< ԶԱՐԷ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր Արեշ 48 փողոց,
31տուն
<< ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 24701 03314340000
ՀՎՀՀ 00465281

ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » հունիս 2025թ. կնքված
ԱՀԾ-ՀՄԱԾՁԲ-25/02 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ավերով խատված փաթ ժնի մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79811100/3	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / թղթապանակի տպագրություն	240 000	240 000	240 000	240 000	240 000	240 000	240 000	**240 000**
2	79811100/4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / նոթատետրերի տպագրություն	120 000	120 000	120 000	120 000	120 000	120 000	120 000	**120 000**
3	79811100/5	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ գրանցամատյանների տպագրություն	120 000	120 000	120 000	120 000	120 000	120 000	120 000	**120 000**
4	79811100/6	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / գրանցամատյանների տպագրություն	70 000	70 000	70 000	70 000	70 000	70 000	70 000	**70 000**
5	79811100/7	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / ձևաթղթի տպագրություն	135 000	135 000	135 000	135 000	135 000	135 000	135 000	**135 000**
6	79811100/8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / ձևաթղթի տպագրություն	13 500	13 500	13 500	13 500	13 500	13 500	13 500	**13 500**
7	79811100/9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ / ձևաթղթի տպագրություն	4 500	4 500	4 500	4 500	4 500	4 500	4 500	**4 500**

8	79811100/10	Թվային տպագրության ծառայություններ / ձևաթղթի տպագրություն	25 000	25 000	25 000	25 000	25 000	25 000	25 000	**25 000**
9	79811100/11	Թվային տպագրության ծառայություններ / այցեքարտի տպագրություն	17 500	17 500	17 500	17 500	17 500	17 500	17 500	**17 500**
10	79811100/12	Թվային տպագրության ծառայություններ / կրաֆթ տեսակի A4 ծրարի տպագրություն	132 500	132 500	132 500	132 500	132 500	132 500	132 500	**132 500**
11	79811100/13	Թվային տպագրության ծառայություններ / Կրաֆթ տեսակի A5 ծրարի տպագրություն	112 500	112 500	112 500	112 500	112 500	112 500	112 500	**112 500**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Ք. Երևան, Կառավարության տուն 1
ՀՀ ՖՆ կենտրոնական
գանձապետարան
ՀՀ 900011045987
ՀՎՀՀ 02900687

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

/ստորագրություն/

4.3

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<< ԶԱՐԷ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր Արեշ 48 փողոց,
31տուն
<< ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 24701 03314340000
ՀՎՀՀ 00465281

ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

/ստորագրություն/

4.3